



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 26/66 « 13 02 2020թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016թ. մայիսի 26-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) 8-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. 2020/2021 ուսումնական տարում ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների պաշտոնները համալրելու նպատակով 2020 թ. մարտի 27-ին՝ ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

Հ/Հ	ՎԱՐՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ	ԱՄԲԻՈՆԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՈՓ Ը
1.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Երկրաֆիզիկայի	1
2.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Սերվիսի	1
3.	Աստվածաբանության ֆակուլտետ	Կրոնի պատմության և տեսության	1
4.	Արևելագիտության ֆակուլտետ	Թյուրքագիտության	1
5.	Կենսաբանության ֆակուլտետ	Կենդանաբանության	1
6.	Հայ բանասիրության ֆակուլտետ	Հայոց լեզվի պատմության	1
7.	Հայ բանասիրության ֆակուլտետ	Հայ նորագույն գրականության	1
8.	Հայ բանասիրության ֆակուլտետ	Գրականության տեսության և գրաքննադատության	1
9.	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ	Դիֆերենցիալ հավասարումների	1
10.	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ	Հանրային կառավարման	1
11.	Պատմության ֆակուլտետ	Սփյուռքագիտության	1
12.	Պատմության ֆակուլտետ	Մշակութաբանության	1
13.	Ռուս բանասիրության ֆակուլտետ	Ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար)	1
14.		Ֆիզիկական դաստիարակության և սպորտի	1

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ

ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը, գիտական քարտուղարին և ֆակուլտետների ղեկաններին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ